



«ԹՈՂ ՏՈՒԷՐ ՄԱՆԵՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԵՆՈՒՅ ԳԱՆ» : ՂՈՒԿ. ԺԸ. 16:

Հ Ա Տ Ո Ր Գ .

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ . ՅՈՒՆԻՍ 1 . 1875 .

ԹԻՒ 7



Ք Ա Ն Ն Ո Ա

Քաղաքացիական մարտ է, ինչպես կը տեսնես անոր պատկերէն: Գլխիւր քէ չունի, բայց մաղբը եղտաւած, և վեր առնելով կապած է, այնպէս որ գլխուն երկու կողմը ցուլի եղջիւրներու նման գուրս ցցուած են: Անոր նայելով պիտի կարծես թէ շատ պինդ լաթեր հագած է: Եթէ մեր պատկերն ալ գոյներով ցուցնելու կարող ըլլայինք, աւելի

պիտի կարծէիր այսպէս, քանզի անոր բոլոր մարմնոյն վրայ տեսնուած զարմանալի շքանակներն և աստղերը կապոյտ, կարմիր և թուխ են: Սակայն ինք հանդերձ հագած չէ: Երջանակայ մէջի թուխ գոյնը բուն անոր մարմին գոյնն է, կապոյտ ու կարմիր գոյներն ալ անոր գունաւորուած մարմն են, և այս գունաւորութիւնը եղած է անոր մարմնին ասեղով ծակծկելով, և ծակծկած տեղերուն

վրայ կարմիր և կապոյտ մեղան բսելով: Անոր հագած բոլոր հանգերձը մէջը կապուած մտրապոյն լաթի կտորն է: Սակայն Քաղանոս կը պարծենայ իր նկարեալ մարմովը, ինչպէս գուն, Արմենակ, կը պարծէիր քու նոր լաթերովդ որ անցեալ կիրակի հագար: Քանզի Քաղանոսայի նկարեալ մարմը կը ցուցնէ թէ ան մեծ չորպաճի է:

Հասարակ մարդ մը այսպիսի գործ մը կատարել տալու համար արհեստաւորին չի կրնար պէտք եղած ուղերն ու խոճկորները տալ. միայն հարուստ մը կրնայ այնքան ժամանակ վասնել այսպիսի գործի մը համար, քանզի Քաղանոս գրեթէ 40 տարի տուաւ այս գործին:

Տար տարեկան էր Քաղանոս, երբ առաջին գիծերն անոր մարմնոյն վրայ տպաւորուեցան, և այնուհետև ամէն ամիս նոր նոր ձևեր կ'աւելցուէին: Երբ ամէն օրուան բացուած վէրքերը կը բուժուէին, Քաղանոս կը նստէր և թող կու տար որ նկարիչը նորէն ասեղով ծակէր անոր մարմը, որչափ ատեն որ Քաղանոս ցաւին կրնար դիմանալ. և նկարիչը ամէն անգամ անոր մարմնոյն վրայ աւելցուած նկարներուն համար խոճկոր մը կամ ուլ կամ մեծ ձուկ մը կ'ընդունէր:

Կարծե՛մ, կ'ուզես դիմանալ թէ Քաղանոս ուր կը բնակէ: Խաղաղական Ուլկիանոսի հազարաւոր կղզիներէն մեկուն մէջ կը բնակի, որ Մաքրիզեան կոչուած կղզիներու խումբին մէջ է, ուր կը բուսնի հնդիկ ընկոյզը, և պատուզ մը որ եփուելով հացի տեղ կ'ուտուի: Պատկերին մէջ կը տեսնես Քաղանոսայի նաւակին մէկ մասը, և Քաղանոս որ ալ ձեռքով թիակ մը բռնած է, ձախտօն ալ ցուպ մը՝ կըռ-

ուելու համար. տունը, կինը և զուգըններն ալ հեռուն կեցած են:

Այս պատկերն այն կղզիներուն մէջ բնակող մարդու մը պատկերն է, սակայն այսպիսի մարդիկ տարուէ տարի կը նուազին: Քանզի հոն քարոզիչներ զրկուած են որոնք կը քարոզեն զՔրիստոս. և ուր որ մարդիկ զՔրիստոս սիրել կը սորվին, կը սորվին նաև կարգալ, գրել և իրենց ժամանակը անցնել աւելի օգտակար բաներով քան թէ իրենց մարթին վրայ պատկերներ նկարել տալով:

ԱՌ ՔՐԻՍՏՈՍ ՍԻՐՈՑ ՆՇԱՆ ՄԸ

Առաքելեան պր. Մելքոն քանի մը խօսք ըրած է ճորճի Պարնըմ անուն վեց տարեկան տղու մը վրայ, որ անցեալ մարտին Վանայ մէջ մեռաւ: Այս սիրելի փոքրիկ տղան կը սիրէր զՅիսուս, ուրիշներուն ալ կը սորվեցնէր զանի սիրել, իւր սէրը որ առ Քրիստոս սովորաբար կը ցուցնէր զգուշութեամբ հնազանդելով մանաւանդ Քրիստոսի այն պատուէրներուն որ ճշմարիտ խօսելու վրայ են:

Ճորճի անդամ մը հարցուելով թէ քանի տարեկան էր, պատասխանեց, «Հինգ տարեկան եմ»: Բայց իսկոյն յիշելով թէ իր տարիքը ճիշդ հինգ չէր, այլ հինկէն քանի մը օր պակաս, շատ նեղացաւ ճիշդը չընելուն համար, ուստի և հարցումն ընող բարեկամին ետեւէն վազեց պոռալով: «Պարոն Գաւիթ, գրեթէ հինգ, Պարոն Դաւիթ, զրեթէ հինգ»: Փափուկ սիրտ և փափուկ խիղճ ունեցող ճորճի Փրկչին երթալու պատրաստ էր, երբ Տէրը կանչեց զանի երկնաւոր Հօրը տունը ուր շատ բնակարաններ կան:

Մենք ալ այս սիրելի փոքրիկ տղուն պէս ջանանք զգոյշ ըլլալ միշտ որ մեր խօսքերը ճշմարիտ ըլլան:

ԺԱՄԱՆԱԿԸ ԵՏ ՏԱՐ

Ղուկաս քերականէն համար մը պիտի սորվէր, եւ ետքը շոգեկառքով պիտի երթար, քանզի հայրը ըսած էր անոր, «Կէս օրին կու գամ, և եթէ համարգ սորված ես, մէկտեղ շոգեկառքով կ'երթանք»: Ղուկաս շատ ուրախացաւ, քանզի գեռ շոգեկառքով գացած չէր, բայց իր համարը սորվելու շատ փոյթ չըրաւ, և երբ անոր ըսուեցաւ թէ կէս օրը մօտ է, չիփթելով վաղեց Մարիամին գնաց, և հարցուց. «Ժամը քանին է, հայրս երբ պիտի

գայ»: «Իրեթէ կէս օր է», պատասխանեց Մարիամ: «Կարծեմ հայրդ քանի մը բոպէէն կու գայ»: «Բայց ես համարս գեռ սորված չեմ, չեմ ուզեր որ գայ հայրս, ժամանակը ետ տար», ըսաւ Ղուկաս: «Ժամանակը չեմ կրնար ետ տանիլ, ժամանակը ետ չերթար»,



ըսաւ Մարիամ: «Բայց տանելու ես» ըսաւ Ղուկաս, մատով ժամացոյցը ցուցնելով. «Ետ տանելու ես քանզի համարս գեռ սորված չեմ, և կառքերն ինձի համար չեն սպասեր. ետ տար»: «Ժամանակը ետ չերթար», ըսաւ գործեալ Մարիամ: «Եթէ գործը ժամանակին բրած չես, հետեւանքը պիտի կրես»: «Հետեւանքը յանդիմանութիւն մը պիտի ըլլայ ինձի, և հայրս զիս տունը թողլով մինակ պիտի երթայ շոգեկառքով», ըսաւ Ղուկաս: «Շատ կը ցաւիմ, բայց ասոր վրայ առաջ խորհելու էիր», ըսաւ Մարիամ: «Ժամանակը զոր կը կորսնցնենք» ետ չիգար մեզի օգնելու: «Հիմա ես ինչ ընեմ», հարցուց Ղուկաս, գրեթէ լալով: «Աշխատէ», պատասխանեց Մարիամ: «Շատ աշխատէ, թերեւս հայրդ չեկած կրնաս համարգ սորվիլ»: «Չեմ կրնար, գիտեմ որ չեմ կրնար» ըսաւ Ղուկաս, բայց և այնպէս սենեակէն դուրս ելլելով սկսաւ աշխատիլ և ջանալ ինքզինք ազատել վատնուած ժամանակին հետեւանքէն:

Մտոյգ է որ ժամանակը ետ չերթար: Յառաջ, յառաջ, յառաջ կ'երթայ. առէն բոպէ յառաջ, յառաջ, յառաջ կ'երթայ, մինչև որ բոպէները ժամ կ'ըլլան, ժամերը՝ օր, և օրերը՝ տարի: Ժամանակը մեզ իր հետը մէկտեղ առնելով յառաջ կ'երթայ, բայց բնաւ ետ չերթար: Եթէ մեր գործքերը ժամանակին ըրած չենք,

ժամանակը ետ չի գտնար մեզի նորէն գործելու պատեհութիւն տալու: Կորսուած պատեհութիւն մը ձեռք չի բերուիր:

Այս Աւետարեքը կարգացող տղայք թող ջանան որ իրենց կենաց վախճանին, Ղուկասի պէս իրենց պարտաւորութիւնը ժամանակին կատարած չըլլալով, չվախնան իրենց Հօրը գալէն:

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ ՔՐԻՍՏՈՍԵԱԿԱՆՆԷՆ ԴԱՍ ՄԸ

Յիսուսի երկրի վրայ ապրելէն մինչև հիմա քանի տարի է:
— Իբր 1800 տարի է:
Յիսուս ինչու համար աշխարհ եկաւ:
— Մեղաւորները փրկելու:
Յիսուս ինչ ըրաւ:
— Մեզի համար շարչարուեցաւ ու մեռաւ:
Յիսուսի համար մենք ինչ ընելու ենք:
— Չանալու ենք անոր հաճոյ ըլլալ:
Ինչպէս կրնանք զանի ըստ արժանւոյն հաճեցնել:
— Բարի ըլլալով:

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ԺԱՄԱՅՈՅՑԸ

Անդրանիկ շատնց կը փափաքէր ժամացոյց մը ունենալ: Հայրը վերջապէս անոր ժամացոյց մը գնեց և Անդրանիկ շատ ուրախ եղաւ: Շարունակ կը հարցունէր ուրիշներուն, «Ժամը քանին է», և երբ կ'ըսուէր թէ այս ինչ ժամ է, իսկոյն իր ժամացուցին կը նայէր թէ ան ալ ճիշդ նոյն ժամը կը ցուցնէր: Յետոյ ժամագործին խանութը կ'երթար անոր մեծ ժամացոյցին նայելու, ճիշդը գիտնալու համար:

Օր մը ժամագործին մեծ ժամացոյցն աւրուած ըլլալով ժամը ճիշդ չէր ցուցնէր. ուստի Անդրանիկ չկրցաւ իր ժամացուցին ճշգրտութիւնը ստուգել: Անդրանիկին համար շատ հոգ ընելու բան չէր ժամը ճշգրտ գիտնալ, բայց մեզի համար շատ անդամ հարկ է կարեոր բաներու մէջ գիտնալ ճշմարիտը: Արդ, շնորհակալ ըլլանք որ Աստուած չթողուց մեզի կարեւոր բաներու մէջ ճշմարտութիւնը մարդոցմէ սորվելու, այլ մեզի անփոփոխ և անսխալ առաջնորդ տուաւ իր խօսքը որ ճշմարտութիւն է:

Ուրիշ բան մ'ալ կայ զոր Անդրանիկին ժամացոյցը ինձի կը յիշեցնէ: Թէպէտ անիկա շատ ուզեց այն ժա-

մացոյցը, և ի սկզբան ստէպ ստէպ հանելով կը նայէր անոր, սակայն քիչ մը ետքը ձանձրացաւ, և վերջապէս ուրիշի մը ծախեց Ժամացոյցը: Մենք ալ շատ անգամ մեր ցանկալի բաներուն այսպէս կ'ընենք: Երբ չունինք զանոնք, թշուառ կը կարծենք զմեզ, և երբ կը ստանանք, շուտով կը ձանձրանանք անոնցմէ: Այն գանձերը զոր երկրի վրայ կը գիզենք՝ շուտով մեզի ձանձրալի կ'ըլլան, բայց այն գանձերը զորս երկիրքը կը գիզենք և որոնց վրայ Տէրաջը օրհնութիւնը կայ՝ մեզ գոհ կ'ընեն: Այս պատճառաւ Քրիստոս կը պատուիրէ մեզի մեր գանձերը երկիրքը գիզել:

Տղայոց Աւետարտի համար

ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹՈՒԼՆԵՐ


ԱՌԱՎ ՄԸ

Անգամ մը գիւղացի մը իր արարը մշակելով ցորեն ցանեց հոն, և կը սպասէր հունձրի, քանզի ուրիշ միջոց չունէր իր ընտանիքը պահելու: Գոժ բախտաբար այն տարին անձրեւ չեկաւ, այնպէս որ հունձրին չյաջողելուն երկուց կար: Երբ մարդն ամէն օր արտամութեամբ կ'երթար տեսնել իր արարը, և աչուրները միշտ երկիրքն էին ամպերուն վրայ՝ տեսնելու համար թէ արդեօք անձրեւի յոյս կար:

Օր մը որ, գրեթէ յուսահատ, ըստ սովորութեան երկիրքը կը նայէր, ամպի մը մէջէն որ ճիշդ անոր գլխուն վրայ էր՝ անձրեւի երկու կաթիլ տեսան այս խեղճ գիւղացին, և սկսան իրարու ըսել այսպէս: Կաթիլներուն մին ըսաւ ընկերին. «Կը տեսնես սա գիւղացին, շատ կը ցաւիմ անոր վրայ. այնչափ հագ տարաւ իր արախն, և ահա բոլոր հունձը չորնալու վրայ է. կը փափաքիմ անոր բարիք ընել:» «Գո՛ւն,» ըսաւ ընկերը, «գո՛ւն որ կաթիլ մը անձրեւ ես՝ ինչ կրնաս ընել արախ մը. անոր մէկ հասկն անգամ չես կրնար թրջել:» «Այո,» ըսաւ միւսը, «մեծ բան մը չեմ կրնար ընել, բայց գոնէ կրնամ ուրախացնել խեղճ գիւղացին: Ընկեր, ես պիտի ընեմ ինչ որ կրնամ, և ահա կ'երթամ,»

ըսաւ. միւս կաթիլն ալ անոր հետեւեցաւ, և երկուքը մէկէն իջան: Կաթիլներուն մին ինկաւ գիւղացու յիշիլին, միւսն ալ հասկի մը վրայ, «Ո՛հ,» գոչեց գիւղացին հիացմամբ և ձեռքը քթին տանելով, «Ահա անձրեւի կաթիլ մը. ուրեմն անձրեւ պիտի դայ:»

Մինչ այն երկու կաթիլն այնպէս իրարու հետ կը խօսէին, երրորդ կաթիլ մը ըսելով, անոնց հետեւեցաւ, և ինկաւ ուրիշ հասկի մը վրայ: Ասոր վրայ ուրիշ կաթիլներ որ միւսներուն երթալը տեսած էին՝ ըսին իրարու. «Մեր ընկերները բարի դործի մը կ'երթան,



ՕՐԵՓԵՏԱԼ

մենք ինչու համար կը դանդաղենք, օ՛ն, մենք ալ երթանք»: Ըսին, և խօսիչն չորրորդ կաթիլ մը ճամբայ ելաւ: Անոր ետեւէն ուրիշ անհամար կաթիլներ, «Մենք ալ կ'երթանք, մենք ալ,» գոչելով ամպէն վար արտին վրայ տեղացին: Այսպէս արար ուսողուեցաւ, հունձն ալ նորէն կանանչացաւ, զուարթացաւ և առատ բերք տուաւ: Անտարակոյս առաջին կաթիլն որոշումը եղաւ պատճառ այս բարեաց:

Մի ըսէք ուրեմն, տղայք, թէ «Մենք ինչ կրնանք ընել,» և կարճատևութեամբ ես մի կենսաք ընելէ ինչ որ կրնաք: Հրեշտակներն ալ ուրիշ բան չեն ընեք բայց եթէ ինչ որ ընել կարող են:

Թարգմանեց Անգղերէնէն ԱՐՐՈՋԱՄ ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԵԾ ՄՈՂԽՍ ՄԸ

Այս կենդանին շատ չինմանիր այն կանանց կամ թուխ փոքրիկ մողէսներուն զորոնք դաշտերը քալած ատենը կը տեսնեն որ շատ արագութեամբ ճամբաներուն վրայ կը վազեն. սակայն սա ալ մողէսի տեսակ է, թէ և ձեր տեսած մողէսներէն մեծ: Եւրոպացի գիտնականք այս կենդանին կոչած են ծովային Օբեռէֆու որ գեղեցկագուլուն կը նշանակէ: Թուրքիոյ մէջ այսպիսի կենդանիներ չենք տեսներ: Կ'երևի թէ այս անունը հեգնօրէն տրուած է այս կենդանուոյն, քանզի գիտեմ որ ամենքդ ալ պիտի ըսէք, Անոր գլխուն

վրայ գեղեցիկ բան մը չկայ: Սակայն ինչ որ է, այս կենդանին անվստաս է, և թէ ցամաքի վրայ և թէ ջուրի մէջ կ'ապրի, և ձկան պէս կը լողայ, և ինչպէս հարթ գետնի վրայ, նոյնպէս ուղղորդ ժայռերէ և բլուրներէ վեր գիւրուութեամբ կը քայլէ:

Տղայոց Աւետարտի համար

ՈՒՐ Է ՍԱՆԳՈՒՂ

Մայրը զՅարութիւն, որ փոքրիկ տղայ էր, գիշեր մը բակը հանեց, բայց ստիպուեցաւ քանի մը անգամ զՅարութիւն թողուլ և միւս սենեակն երթալ: Յարութիւն կը վախնար միտակ մնալ, և մայրն ըսաւ անոր, «Յարութիւն, մի վախնար, Աստուած մեր քովն է:» Տղան, «Ո՛ւր է,» ըսաւ, «մենք չենք տեսներ զԱստուած:» «Տղաս,» պատասխանեց մայրը, «թէ պէտ մենք զԱստուած չենք տեսներ, ան մեզ միշտ կը տեսնէ, և երբ երկիրք երթանք, անտեսն պիտի տեսնենք զանի:» Յարութիւն զարմանալով հարցուց նորէն իր մօրը. «Մայր,» ըսաւ. «նր է այնչափ բարձր սանդուղ որով երկիրք հասնինք. մեր սանդուղը շատ կարճ է:» Հայրը լսելով այս խօսքը, տպուն հարցուց. «Թու՛նաները որ օդին մէջ այնչափ բարձր կ'ըլլեն՝ սանդուղ ունին:» «Ոչ,» ըսաւ Յարութիւն, «անոնք թեւերով կը թռչին:» «Այսպէս ալ մեզի Աստուած լուսեղէն թեւեր պիտի տայ, որ երբ կը մեռնինք, թռչելով երկիրք երթանք զԱստուած տեսնելու,» պատասխանեց հայրը:

ՔՐԻՍՏՈՍ ԱՄԷՆԸ ԱՄԷՆ ԲԱՆԻ ՄԷՋ

Գիտցիր որ քեզ փրկողը Քրիստոս է, ոչ թէ քու պնդով յարելը անոր : Քրիստոսով ունեցած ուրախութիւնդ չէ քեզ փրկողը . Քրիստոսի վրայ ունեցած հաւատքդ ալ թէ քեզ փրկելու միջոց է, բայց փրկող չէ, փրկողն է Քրիստոսի արիւնն ու արժանաւորութիւնը : Ուստի մի նայիր Քրիստոսի յարելու համար ըրած գործքերուդ, այլ նայէ Քրիստոսի, հաւատքիդ առաջնորդին ու կատարողին : Երջանկութիւն բնաւ պիտի չդանենք մեր աղօթքներուն, գործքերուն և մեր զգացումներուն նայելով : Քրիստոս է որ մեր հոգիներուն հանգիստ կուտայ, ոչ թէ քեզ : Թող քու յոյսերդ ու երկիւղներդ բոլոր մը զքեզ Յիսուսէն չհեռացնեն : Ան է ամէնը ամէն բանի մէջ . գնա անոր ետեւէն, և ան քեզ բնաւ պիտի չթողու :



Բ Ա Ռ Ի Տ Ը

Եթէ կէօք սույի երթաս, պիտի տեսնես որ հոն մարդիկ ծաղկամաններ, սափորներ, դաւաթներ և թաղարներ կը շինեն. և եթէ ուզես, քեզի ալ փոքրիկ անօթներ կամ սափորներ կը շինեն : Այս պատկերը կը ցուցնէ այն ամաններուն շինուիլը : Երուտը կտոր մը կաւ կ'առնէ և կը թրջէ զայն որ մատուրներուն չփակչի, և ետքը կըր տախտակը կտրին հետ շատ արագ ստորիը դարձնելով ձեռուրներով կտրին կուտայ ինչ ձև որ կ'ուզէ : Կը կարծես թէ կաւը ծաղկաման եղաւ, բայց բրուտին ձեռքը քիչ մը դառնալով սափոր կ'ըլլայ . կամ կը կարծես թէ սափոր է, բայց երբ բրուտը բռնաւ մէջը կը կոխէ, կաւը կիտրանի ծառի թաղար մը կ'ըլլայ : Կարծեմ թէ Պօղոս առաքեալ, երբ Հուովմայեցւոց թուղթը կը գրէր, ըրտի մը գործարանին մօտ կը բնակէր : Կրնաս ըսել թէ ինչու համար այսպէս կը կարծեմ :

ԿԱՂՆՈՑ ԵՒ ԸՆԿՈՒՉԻ ՏԵՍԱԿ ՉՈՐ ՊՏՈՒՂՆԵՐ

Ասանք ընդհանրապէս կ'ուտուին, բայց ոմանք եփուելով կերակուրներու մէջ ալ կը գրուին, ոմանք մազի իւղ և անուշեղէն շինելու կը գործածուին, ոմանցմէ գգալ, տուփ և կոճակ կը շինուին, ոմանք ալ հացի և ճրագի տեղ կը գործածուին, ոմանցմէ աճառ (սորձ) և մեղան կը շինուին, այլք կը գործածուին ակուններ մարբելու, ոմանք ալ գեղեցու, դարձեալ ոմանցմէ նաչիհ (նշապէ) կը շինուի, վերջապէս ոմանք ալ խաղախելու, այսինքն մարթ մարբելու կը գործածուին :

Գուք ախորժելով կ'ուտէք պիտակը (Շոֆ քուրալ). բայց Ամերիկայի և Անգղիոյ մէջ այս պտուղը շատ չուտուիր. անկէ մազի իւղ և աճառ կը շինուին, շաքարեղէնի համար ալ կը գործածուի :

Ընկոյզը զոր հոս ամէն մարդ կ'ուտէ և որով աղայք կը խաղան Ամերիկայի մէջ չի գտնուիր. բայց հոն կայ ուրիշ տեսակ մը ընկոյզ, որուն կեղևն այնպէս կարծր է որ մրձով ուժղին զարնուելով հողիւ կը կտորի, և մէջի պտուղն այնպէս պարտաւ է որ մարդ անկէ շատ չի կրնար ուտել :

Նուշը ամէն տեղ կ'ուտուի. բայց անկէ իւղ ալ կը հանուի, և, ինչպէս հոս, նոյնպէս ուրիշ տեղեր նուշը շաքարով կը պատրաստուի աղցն համար :

Կաղինը զոր հոս ամէն մարդ ախորժելով կ'ուտէ Ամերիկայիք շատ չեն սիրեր, ուր Անգղիայիք այնպէս կը սիրեն որ Անգղիոյ մէջ բուսածներէն զատ դուրսի երկիրներէն ալ կաղին կը բերուի տարին իբր տասը միլիոն քաշ :

Շաղանակը Սոյանիոյ և Իտալիոյ մէջ աւելի կ'ուտուի քան հոս, և կան մարդիկ որ ձմեռները շագանակ միայն կ'ուտեն : Ամերիկայի մէջ տեսակ մը շագանակ կայ որ շատ մանր է, բայց անուշ է շաքարի պէս, և Ամերիկայիք չեն եփեր զայն :

Բայց ընկուզի այս հասարակ տեսակներէն շատ ուրիշ այլևայլ տեսակ ընկոյզներ ալ կան ուրիշ երկիրներու մէջ : Զորօրինակ Հնդկի ընկոյզը որ բոլոր այնպիսի վրայ կ'ուտուի Անոր մէջի պողէն իւղ կը հանուի, կարծր կեղևէն գգալ և գաւաթ, դուրսի փշտ փոճուկէն ալ չուան և փոխաթ կը շինուի :

Կաղնոյ մեծութեամբ տեսակ մը Հնդկի ընկոյզ ալ կայ որ իբրև համեմ կը գործածուի : Ասոր ծառը գեղձեւոյ նման է, և ընկոյզն անոր գեղձի նման պողոջն կուտն է : Ասոր վրայի կեղևն ալ չորցուելով իբրև համեմ կը գործածուի :

Այս օրերս կոստանդնուպոլիս տեսակ մը պտուղ կը բերուի զոր Հրեայք փոզցները կը ծախեն . « Ամերիկա ֆրաղը » կոչելով : Ասիկա ուլտի (դիւլեա) տնկոյ նման փոքր անկոյ մը պտուղն է, բայց հողին մէջ արմատին վրայ կը բուսնի խաղողի ուղիւսի պէս փունջ փունջ : Ամերիկէի մէջ տակէ հաց կը շինուի, իսկ Ամերիկայի մէջ անգործ մարդիկ այս պողէն քիչ մը բան առնելով կը ծախեն, քանզի Ժողովուրդը զայն իբր զբոսանք կ'ուտէ :

Կայ նաև Պրագիիոյ մէջ « Գոգուիլա » կոչուած տեսակ մը ընկոյզ որ չուտուիր, բայց սի և փոյլուն ըլլալով գեղեցիկ տուփեր շինելու կը գործածուի : Արմաւենայ տեսակէն ծառ մ'ալ կայ որ ընկոյզ ունի, որմէ կ'ոճակ կը շինուի, և որ կը վառի մոմի պէս :

Ընկուզի վրայ այսօր այսչափ բաւական է : Բաւական ցուցուեցաւ թէ ընկոյզը ոչ միայն ուտելու, այլ և ուրիշ շատ բաներու կրնայ գործածուիլ :

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԻ ԿԱՐԳԱՅՈՂ ՓՈՒԳՐԻԿ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Երբեմն երբ օտարականի մը տուն կ'երթաս, հոն երկամէ մահիճներ կը տեսնես : Աստուածաշունչին մէջ որ մարդուն համար ըսուած է թէ երկամէ մահիճ կը գործածէր :
2. Ծովուն խորէն Աստուծոյ աղօթք ընող մարդն ո՞վ էր :
3. Աստուածաշունչին որ գլխուն մէջ զԱստուած փառարանելու համար գործածուած նոյն բառերը քսան անգամէն աւելի կրկնուած են :

ԻՄՅՅԻՍԻ ԱՒԵՏԱՐԵՐԻՆ ՄԷՋ ՆԿԱՐՈՎ ԿԱՐԳԱՆՈՒ ԽՈՍՏԵՐԸ ԿԸ ԳՏՆՈՒԻՆ 9. Առակայ ԺԹ. 22. — 10. Առակայ ԻԵ. 18. — 11. Առակայ ԻԶ. 21. — 12. Առակայ ԻԷ. 19

Պ Է Տ Գ Մ Ը

Տղայոց Աւետարեթի նաև շաքարածախան Աւետարեթներու համար աւելի բաժանորդներու պէտք ունին : Աւետարեթներու արգարև շատ աժան են, և կը փափաքինք որ զանոնք սիրողները ջանք ընեն նոր բաժանորդներ գտնելու :

Ամերիկայի միսիոնարոց ընկերութեան կողմէն Խմբագիր ձ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԼՄԱՆ
Չազմագըրար, Յակոբեան խան, Թիւ. 12.